## ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԳՈՀԱՐ

# 1953 Թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ ԻՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ «ԱՅԱՔՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հայտնի է, որ այսօր Իրանի Իսլամական Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև գոյություն չունեն դիվանագիտական հարաբերություններ, դրանք խզվեցին 1980 թվին: Կարելի ասել, որ դրա արմատները ձգվում են դեպի 20-րդ դարի կեսերը: 1953թ. Իրանում տեղի ունեցած դեպքերը խորը ազդեցություն են թողել Իրանա-ամերիկյան հետագա հարաբերությունների վրա:

Ըստ Ս.Կ. Ֆարսոնի, Իրանի ժողովրդի ատելությունը շահի և Միացյալ Նահանգների հանդեպ արդյունքն էր համընդհանուր այն հիշողության, որը կապված էր 1953թ. ԿՀՎ-ի աջակցությամբ իրականացրած հեղաշրջմանը և դրան հաջորդող ամերիկյան միջամտությանը Իրանի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանքին[1]:

Դեռևս 1947թ. ԱՄՆ-ում ընդունված ազգային անվտանգության մասին օրենքի հիման վրա ստեղծվեց Կենտրոնական հետախուզական վարչությունը: 1947թ. դեկտեմբերի 1-ին՝ ԿՀՎ-ի ստեղծումից 2 ամիս հետո, ԱՄՆ-ի ազգային անվտանգության խորհուրդը ընդունեց խիստ գաղտնի հրահանգ 5412/2-համարով, որով ԿՀՎ-ին իրավունք էր վերապահվում գաղտնի գործողություններ իրականացնել օտար երկրներում, եթե դա բխում էր Միացյալ Նահանգների անվտանգության շահերից: Հրահանգում նշված էր, որ գաղտնի գործողությունները պետք է իրականացվեն այնպես, որ ԱՄՆ-ի կառավարությունը անհրաժեշտության դեպքում կարողանա հրաժարվել դրանցից[2]:

ԿՀՎ-ի առաջին խոշոր և ըստ էության փորձնական քայլը այս ուղղությամբ հանդիսացավ 1953թ. Իրանում պետական հեղաշրջման կազմակերպումը, որի արդյունքում Միացյալ Նահանգներին անբարեհաճ՝ Իրանի կառավարությունը իշխանազրկվեց:

1951թ. Իրանի նավթի ազգայնացման պատճառով երկրում առաջացած ծայրահեղ լարված իրավիճակի լուծման միակ ուղին ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան 1953թ. համարում էին պետական հեղաշրջումը, որով իշխանակ կանեին վարչապետին, որը ոչ մի կերպ չէր համաձայնվում

անգլո-ամերիկյան պայմանների հետ, քանզի դա չէր բխում իր երկրի շահերից: Հեղաշրջման մասին առաջին անգամ խոսեցին Անգլիայում, երբ 1952թ. հոկտեմբերի 22-ին Մ. Մոսադեղը խզեց դիվանագիտական հարաբերությունները Մեծ Բրիտանիայի հետ: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա 1953թ. ԱՄՆ-ի նախագահ դարձավ Հանրապետական կուսակցությունից Դ.Դ.Էյզենհաուերը, իսկ նրանց ավանդականորեն աջակցում էին խոշոր նավթային ընկերությունները: Նորընտիր նախագահի վարչակազմում դժվար էր գտնել քաղաքական գործչի, որը կապված չլիներ խոշոր նավթարդյունաբերողների հետ, ուստի նրանց շահերից էլ էր բխում Իրանի կառավարության բարձր պաշտոններում տեսնել ԱՄՆ-ին բարեհաճ քաղաքական գործիչների: Եվ քանի որ ԱՄՆ-ը դեմ էր արտահայտվել Իրանի նկատմամբ ուժ գործադրելու՝ Մեծ Բրիտանիայի ծրագրերին, զգուշանալով Խորհրդային Միության անկանխատեսելի քայլերից, նրանք համատեղ որոշեցին կազմակերպել գաղտնի գործողություն և այդ ճանապարհով լուծել ծառացած խնդիրները:

Նախնական առաջարկը Այաքսի իրականացման համար ստացվեց Բրիտանական հետախուզությունից այն բոլոր անհաջող ջանքերից հետո, երբ Մոսադեղը, այնուամենայնիվ, չհերքեց Անգլո-իրանական ընկերության ազգայնացման խնդիրը: Բրիտանացիների հիմնավորումը այս հարցում պարզ էր. վերստանալ ԱԻՆԸ-ի նավթային կոնցեսիան: Դա Սիացյալ Նահանգներին չէր մտահոգում. նրանց հուզում էր ազդեցության բացահայտ փոխարինման սպառնալիքը ի օգուտ Ռուսաստանի[3]:

Հարկ է նշել, որ Բրիտանական հետախուզությունը գործողությունը անվանել էր «Բութ» («Boot»), սակայն հակամոսադեղյան գործողությունը ամերիկացիները կոչեցին «Այաքս» («Ajax»)[4]:

Մոսադեղը բազմիցս հասկացնում էր, որ եթե այս խնդրի ժամանակ ԱՄՆ-ն չաջակցեն Իրանի կառավարությանը, ապա Իրանը ստիպված կլինի համագործակցել սոցիալիստական ճամբարի երկրների հետ:

Գրականության մեջ հաճախ կարելի է հանդիպել վկայությունների, որ ԱՄՆ-ի նախագահ Էյզենհաուերը սարսափում էր տեսնել Իրանը կոմունիստական ազդեցության տակ, որով էլ փորձում են բացատրել կազմակերպած հեղաշրջումը: Եվ դրա լավագույն ապացույցը նախագահ Էյզենհաուերի խոսքերն են. «ԱՄՆ-ի կառավարությունը կդիմի անհրաժեշտ միջոցների, որպեսզի կանխի կոմունիստական վտանգն Իրանում»[5]:

1952թ. հոկտեմբերից մինչև 1953թ. ապրիլ Իրանի կառավարությունը բացահայտեց Մոսադեղի դեմ կազմակերպված 3 դավադրություն: Օրեցօր Մոսադեղը մեծացնում էր իր լիազորությունները՝ փորձելով սահմանափակել շահինը: «1953թ. փետրվարին Մոսադեղը առաջարկեց ինձ առժամանակ հեռանալ երկրից,- գրում է շահ Մոհամմեդ Ռեզա Փահլա-

վին... առաջարկեց, որ ես ուրիշի անվան տակ անցնեմ Իրաքի սահմանը և այնտեղից հեռանամ Բեյրութ: Բայց, ինչ որ կերպ հեռանալու մեր ծրագրի մասին տեղեկացվեց ժողովուրդը, որն էլ անմիջապես դուրս եկավ փողոց՝ արտահայտելով իր նվիրվածությունը գահին: Այսպիսի աջակցություն տեսնելով՝ ես որոշեցի մնալ»[6]:

Գործնականում հեղաշրջումը նախապատրաստեց Մերձավոր և Միջին Արևելքում ԿՀՎ-ի ռեզիդենտ 37-ամյա Քերմիտ (Կիմ) Ռուզվելտը, 1901-1909թթ. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի թոռը:

1952-1953թթ. ընթացքում Բրիտանիայի հետախուզության աշխատակիցները ժամանեցին Վաշինգտոն՝ քննարկելու ծրագիրը: Առաջին այցի ժամանակ անգլիացիները և ԿՀՎ-ի աշխատակիցները բացառապես քննարկեցին գործարքը[7]:

Կիմ Ռուզվելտին աջակցում էին ԱՄՆ-ի դեսպանատան 5 աշխատակիցներ, որոնք ԿՀՎ-ի ներկայացուցիչներն էին, և 7 իրանցիներ, որոնց կազմում գործում էին Իրանի հետախուզության բարձրաստիճան 2 պաշտոնյաներ: Նրանք իրար հետ կապվում էին միջնորդների միջոցով ջանալով հնարավորության սահմաններում խուսափել անձնական շփումներից[8]: Էյզենհաուերի վարչակազմը Ա.Դալլեսի երաշխավորագրերի համաձայն լիովին հաստատեց հեղաշրջման ծրագիրը, և այն իրականացնելու «պատիվը» ստացավ Ք.Ռուզվելտը: Հեղաշրջման ծրագրի քննարկման ժամանակ պետքարտուղար Դալլեսը ասաց, որ. «Եթե ռուսները կարողանան վերահսկել Իրանը, ապա նրանք կվերահսկեն նաև Պարսից Ծոցը: Դա նրանց վաղեմի երազանքն է»[9]: Իսկ դա անընդունելի էր ԱՄՆ-ի համար: Մակայն կար մի խնդիր, որ հուզում էր պետքարտուղար Դալլեսին. «Մենք պետք է հիշենք, որ Կիմն անձամբ ծանոթ է Նորին Կայսերական Մեծությանը: Եվ նա շատ նշանավոր ընտանիքից է: Եթե նա կարողանա հեռու մնալ տեսադաշտից և խուսափի իրեն ճանաչող մարդկանց հետ հանդիպումներից, հատկապես շահից, ես հակված եմ մտածելու, որ ամեն ինչ շատ լավ կանցնի»[10]:

Ա.Դալլեսը չէր կարող իրեն հաշիվ չտալ, որ խաղաքարտի վրա է դրված ոչ միայն ԱՄՆ-ի հեղինակությունը՝ որպես գերտերություն, ԿՀՎ-ի վարկը, որը ուժ էր հավաքում և փորձում էր մտնել ընդարձակ միջազգային թատերաբեմ, այլև իր սեփական հեղինակությունը՝ որպես հետախուզության ղեկավար, և ընդհանրապես իր հետագա քաղաքական ապագան: Ծրագիրը լրջորեն ուսումնասիրելուց հետո Ա.Դալլեսը այն ներկայացրեց պետքարտուղար Ջ.Ֆ.Դալլեսին:

Ք. Ռուզվելտը 1953թ. մարտին կարճատև այցով գաղտնի ժամանեց Իրան, որպեսզի տեղում ուսումնասիրի նախատեսվող հեղաշրջման մանրամասները: Գործողության ծրագիրը հաստատել էին պետքարտուղար Ջոն Ֆոսթեր Դալլեսը, իր եղբայրը՝ ԿՀՎ-ի տնօրենը, և պետքար-

տուղարի տեղակալ՝ ԿՀՎ-ի նախկին տնօրեն գեներալ Ուոլտեր Բեդել Սմիթը: Էյզենհաուերը լիովին համաձայն էր նրանց հետ: Սակայն ծրագրի անհաջողության դեպքում նախագահը, ինչպես նաև պետքարտուղարը և ԿՀՎ-ի տնօրենը, հերքելու էին իրենց առնչությունը հեղաշրջման կազմակերպմանը: Հեղաշրջումը, գաղտնագրված էր «Այաքս» անվան տակ[11]:

Հուլիսի վերջին Ռուզվելտը կեղծ անձնագրով Բաղդադից կրկին ժամանեց Իրան: Այդ գործում նրան օգնում էին Իրանի արքունիկը և պաշտոնաթող սպայակույտը գեներալ Ֆազլոլահ Զահեդիի գլխավորությամբ: Դավադրության ժամանակ գործուն աջակցություն ցուցաբերեց նաև Զահեդիի որդին՝ Իրանի ապագա դեսպանը Վաշինգտոնում:

Ունենալով ընդարձակ ցանց՝ թագավորական սպաները աշխատում էին անկայուն վիճակի մեջ դնել կառավարությունը: Նրանք զենք էին մատակարարում ապստամբ ցեղերին, հատկապես շահսեվենսիներին, բախթիարներին, աֆշարներին և թուրքմեններին: Նրանք հարաբերություններ հաստատեցին ոչ միայն հայտնի պահպանողական հոգևորականների, ինչպիսիք էին այաթոլլա Բեհբեհանին և այաթոլլա Բորուջիրդին, այլև Ազգային ճակատի պառակտիչների՝ մասնավորապես Քաշանիի, Ղոնաթաբադիի, Մաքքիի, Բաղայի և Շայեքանի հետ[12]:

1953թ. հուլիսին Ջ.Ֆ.Դալլեսը արտահայտեց ԱՄՆ-ի հակակրանքը Իրանի կառավարության հանդեպ. «Մենք գտնում ենք, որ անհնար է համագործակցել Մոսադեղի հետ, և ցանկացած նոր՝ ոչ կոմունիստական կառավարություն, որ Իրանում իշխանության գլուխ կգա, մեզ համար ավելի գերադասելի է, քան այսօրվա կառավարությունը»[13]: Մեկ այլ հանդիպման ժամանակ պետքարտուղարը հայտարարեց. «Իմ կառավարությունն անհանգստացած է Իրանում կոմունիստական կուսակցության անօրինական գործունեությամբ և Իրանի կառավարության անուշադրությամբ: Այդ զարգացումները անկասկած ավելի կդժվարացնեն ԱՄՆ-ի օգնության տրամադրումն Իրանին»[14]:

Հեղաշրջման վերջին մանրամասները ճշտելու համար 1953թ. օգոստոսին Ա.Դալլեսը այցելեց Շվեյցարիա, որտեղ հանդիպեց Իրանում ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնին: Դեպի շվեցարական Ալպեր ուղևորվեցին նաև Իրանի ղեկավար շրջաններից մի շարք այլ ազդեցիկ դեմքեր, որոնք 1953թ. փետրվարի 23-ին, զինվորականության կողմից Մոսադեղի դեմ կատարած անհաջող դավադրությունից հետո, հեռացել էին երկրից՝ հանգրվան գտնելով Հռոմում: Դրանց թվին էր պատկանում նաև շահի երկվորյակ քույրը՝ Աշրաֆ Փահլավին, որը բավականին աշխույժ մասնակցություն էր ունենում երկրի քաղաքական իրադարձություններին:

Իրադարձություններից մի քանի օր առաջ Իրանում ԱՄՆ-ի ռազմական խորհրդականների խմբի ղեկավար գեներալ Մակկլյուտը գաղտնի

հանդիպում ունեցավ գեներալներ Ֆ.Զահեդիի, Շահբախտի, Ամեդի և մյուսների հետ, որոնց հանձնարարված էր վստահելի սպաների միջոցով Թեհրանի կայազորը միտել Մոսադեղի դեմ ելույթներին: Այդ նույն ժամանակ գեներալ Շվարցկոպֆը իր վրա էր վերցրել զինվորական վերնախավի նախապատրաստումը խռովությանը[15]: Բայց ի վերջո, ինչպես հավաստիացնում է արևմտյան մամուլը, գործողությունը քիչ էր մնում ձախողվեր՝ տեղական մասնակիցների անփութության պատճառով:

1332թ. Օրդիբեհիշտ 1-ին, օտարերկրացի վարձկանները, ովքեր իրականացնում էին «Այաքս» գործողությունը, սպանեցին բրիգադային գեներալ, ոստիկանապետ Աֆշար Թուսին, որպեսզի զրկեն Մոսադեղին իր ուժեղ կողմնակիցներից մեկին[16]:

Մոհամմեդ Ռեզա Փահլավին, օգտվելով սահմանադրական իր իրավունքից, օգոստոսի 13-ին հրաման արձակեց, վարչապետի պաշտոնում Մ.Մոսադեղի փոխարեն Ֆ.Զահեդիին նշանակելու մասին: Շահի հրամանը Զահեդիին և Մոսադեղին պետք է հանձներ արքայազորի գնդապետ Ն. Նասիրին: Սկզբից նա գտավ Զահեդիին, որը Մոսադեղի ոստիկանությունից շուրջ մեկ ամիս ճողոպրում էր, յուրաքանչյուր գիշեր անկացնելով տարբեր տներում: Նասիրին հանձնեց նրան վարչապետության հրամանը: Զահեդին համաձայնվեց: Հաջորդը Մոսադեղն էր[17]:

Հաջորդ օրը մամուլը վարչապետին զգուշացնում էր հնարավոր հեղաշրջման մասին, որն էլ նպաստեց կանխելու օգոստոսի 16-ին նրան ձերբակալելու փորձը: Օգոստոսի 15-ին լույս 16-ին շահական գվարդիայի մի քանի սպա գնդապետ Ն.Նասիրիի գլխավորությամբ փորձեցին ձերբակալել Մոսադեղին: Վարչապետի տան շուրջը ուժեղ պահակախումբ տեսնելով՝ նրանք հայտարարեցին, որ եկել են Մոսադեղին հանձնելու շահի հրամանը: Մոսադեղը հրաժարվեց ենթարկվել հրամանին: Գնդապետ Նասիրին ձերբակալվեց:

«Ես,-գրում է շահը,- ամերիկացի իմ ընկերների աջակցությամբ, որոնց այդ օրերին միացավ ԿՀՎ-ից Ք.Ռուզվելտը և ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնը, արդեն կազմել էի ծրագիր անկանխատեսելի պայմանների համար: Մենք համաձայնվեցինք, որ եթե Մոսադեղը ռազմական ուժ օգտագործի՝ դիմադրելով իր հեռացմանը, ես ժամանակավորապես կհեռանամ երկրից: Մենք գտնում էինք, որ իմ մեկնումը կպարզի իրավիճակը, ցույց տալով Մոսադեղի իսկական դեմքը, երբ նա ուժ կգործադրեր, որն էլ կմիավորեր հանրային կարծիքը գահի շուրջ»[18]: Ռուզվելտը նույնպես կանխատեսել էր իրադարձությունների այդպիսի ընթացքը և դեռ ազատության մեջ գտնվող շահամետ սպաներին թաքցրել ԿՀՎ-ի ռեզիդենտի տանը:

Լուսաբացին Մոսադեղը ելույթով հանդես եկավ և հայտարարեց, որ իրեն տապալելու՝ շահի ծրագիրը անհաջողության է մատնվել: 20 րոպե

անց շահը և թագուհի Մորայան փոքրիկ ինքնաթիռով սկզբից մեկնեցին Ռամսար, իսկ այնտեղից՝ Իրաք: «Իրաքի թագավորը և ես հին ընկերներ էինք: Մոսադեղի արտաքին գործոց նախարար Ֆաթեմին հեռագրեց Բաղդադում մեր դեսպանին՝ կարգադրելով ձերբակալել ինձ: Անհրաժեշտ էր, նա ջանաց ի կատար ածել այդ առաջադրանքը, բայց իհարկե անարդյունք»[19]:

Ամենայն հավանականությամբ շահը կարծում էր, որ այլևս չի վերադառնա հայրենիք: Ի հակառակ նրան Միացյալ Նահանգների նախագահը համոզված էր, որ շահը կվերադառնա: Այնուհետև Մոհամմեդ Ռեզան Բաղդադից մեկնեց Հռոմ, որտեղ մնաց ընդամենը երկու օր:

Այս ամենից բորբոքված՝ հակամիապետական տրամադրություններ ունեցող զանգվածները «Իրանի Ազգային կուսակցության» աջակցությամբ բողոքի ձայն բարձրացրին: Երթի ժամանակ նրանք մայրաքաղաքում քանդեցին շահերի արձանները: Ենթադրվում է, որ այդ ժամանակ Մ.Մոսադեղը սխալ քաղաքականություն վարեց իր կողմնակիցների նկատմամբ՝ ուժ գործադրելով ցուցարարների դեմ: Հարյուրավոր մասնակիցներ, ովքեր Մոսադեղի գաղափարական համակիրներն էին, բանտ նետվեցին: Այս ամենից հետո նրանք բնականաբար երես թեքեցին Մոսադեղից: Օգոստոսի 18-ին բանտից ազատվեցին այն քաղաքացիները, որոնք մեղադրվել էին նախկինում Մոսադեղի դեմ դավադրություններին աջակցելու համար: Նրանք հաջորդ օրը՝ օգոստոսի 19-ին, միացան այս անգամ արդեն հաջողված հեղաշրջմանը: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Մ.Մոսադեղը քաջատեղյակ էր հեղաշրջման մասին և իրավիճակից այլևս ելք չտեսնելով՝ որոշեց այս ճանապարհով հեռանալ քաղաքական ասպարեզից: Ըստ արևմտյան մամուլի՝ Մոսադեղին աջակցող կոմունիստական «Թուդե» կուսակցությունն ուներ իր սեփական ծրագիրը, որն իրականացնելու համար օգտվում էր Մոսադեղի ազգայնացման քաղաքականությունից: Համաձայն արևմտյան հեղինակների՝ «Թուդե» կուսակցությունը ծրագրել էր շահին վտարել երկրից, այնուհետև ամրապնդել իր դիրքերը և Խորհրդային Միության ջանքերով հեռացնել Մոսադեղին իշխանությունից, որից հետո Իրանը կհայտնվեր իրենց վերահսկողության ներքո: Եթե սա համապատասխանում է իրականությանն, ապա վարչապետն իր կառավարման վերջին օրերին, ամենայն հավանականությամբ, տեղեկացվել էր դրա մասին: Այս պարագայում հասկանալի, թե ինչու օգոստոսի 17-18-ին նա ճնշում գործադրեց ցուցարարների վրա, որոնք հրահրվել էին Իրանի ազգային կուսակցության և «Թուդեյի» կողմից: Այս առիթով կարելի է հիշատակել 1953թ. սեպտմբերի 18-ի ֆրանսիական «Մոնդ» թերթի հրապարակումը, ըստ որի «Մոսադեղի համար նախընտրելի էր ցանկացած այլ լուծում, բացա-

ռությամբ խիստ ձախերի հաջողությունից...Նա նախընտրեց հեռանալ, բայց չաջակցել նրանց»:

Այս փաստի մասին գրում է նաև Մոհամմադ Ռեզա Փահլավին «Պատասխան պատմությանը» իր գրքում, որտեղ նա վկայակոչում է. «կոմունիստները ծրագրել էին սկզբից օգտագործել Մոսադեղին՝ ինձ գահընկեց անելու համար: Հետո հայտնաբերվեցին Թուդեի թերթիկները, որտեղ ցույց էր տրվում, որ իմ արտաքսումից երկու շաբաթ հետո Մոսադեղը կհեռացվեր: Ես տեսել եմ փոստային նամականիշ, որը տպվել էր Իրանի Ժողովրդական Հանրապետություն անունով: Տեղյակ լինելով, որ ժողովուրդը իր կողքին չէ, «Թուդեն» ընդհատակ անցավ: Չպետք է մոռանալ, որ մի քանի ամիս առաջ մահացավ Ստալինը, և Սովետական Միության ռազմավարությունը ենթարկվեց մի շարք նշանակալի փոփոխությունների»[26]: Կարծում ենք, որ հենց այդ փաստը մեծապես նպաստեց ԿՀՎ-ի գործողության հաջողությանն Իրանում:

Իսկ մեկ այլ գրքում շահը գրում է, որ թուդեական սպաները ձերբակալվելուց հետո խոստովանել են առ այն, որ «մտադիր են եղել Մոսադեղի ձեռքով Փեհլևի Դինաստիան ոչնչացնելուց յետոյ, պետական հարվածով վերջ տալ նրա կեանքին և ինչպէս ընդունուած է այլ երկրներում, Իրանում նմանապէս հաստատել կոմունիստական իշխանություն»[27]:

Օգոստոսի 17-ին Թեհրան վերադարձավ ԱՄՆ-ի դեսպան Լոյ Հենդերսոնը: Նա անմիջապես այցելեց վարչապետին և հայտարարեց, որ ԱՄՆ-ի կառավարությունը կխոչընդոտի նրա իշխանությանը՝ պնդելով, որպեսզի նա անմիջապես հրաժարական տա:

Օգոստոսի 18-ին իրադարձությունները այլ ընթացք ստացան: Հակամոսադեղյան թերթերը տպագրեցին շահի հրամանը՝ Զահեդիին վարչապետ նշանակելու մասին և մի շարք հայտարարություններ, որ նա արել էր Բաղդադում: Հետո հակակառավարական ցուցարարները առաջին անգամ դուրս եկան փողոց և գրոհեցին բանտերի վրա: Գնդապետ Նասիրին ազատ արձակվեց և գլխավորեց արքայազորը: Օգոստոսի 19-ին հակամոսադեղյան ալիքը նոր ուժ հավաքեց[28]:

Հարկ է նշել, որ այս օրերին նոսրացավ Մոսադեղի համակիրների՝ երբեմնի ստվար բանակը, որտեղ հիմնականում ընդգրկված էին ուսանողներ, հոգևորականներ և մտավորականներ: Դա տեղի ունեցավ «Թուդե» կուսակցության մի շարք սխալների հետևանքով:

Տեղի ունեցան իրար հաջորդող երկու զարգացումներ, որն էլ վճռական դարձավ Մոսադեղի համար: Առաջինը Թուդե կուսակցության հակազդեցությունն էր, որը գործում էր արագ, որպեսզի ընդունելի գերազանցության հասնի անգլո-ամերիկյան անհաջող ճնշումների համեմատ: Թուդեի առաջնորդները ակնհայտորեն հավանություն էին տալիս համընդհանուր ցույցերին ընդդեմ Փահլավիների: Բայց ցուցարարները

միևնույն ժամանակ հարձակվեցին կրոնական խորհրդանիշների՝ ներառյալ մզկիթների, վրա... Օգտվելով այդ սխալից, Միացյալ Նահանգների երկու գործակալներ կաշառեցին մի շարք մարդկանց, որոնք էլ միացան բազմությանը և դրդեցին կրկին հարձակվել կրոնական խորհրդանիշների վրա: Անհնարին է գնահատել նրանց գործունեության կարևորությունը: Բայց պարզ է, որ Թուդեն սխալվեց իր հաշվարկներում, որն էլ պարտության բերեց նրանց՝ հաղթական անիվը վճռականորեն շրջելով դեպի Զահեդին: Օգոստոսի 18-ի գիշերը Մոսադեղը հրամայեց ոստիկանությանը հարձակվել Թուդեի ցուցարարների վրա:

Ամերիկյան դեսպանի հետ այն ճակատագրական հարցազրույցից հետո, ըստ որի ԱՄՆ-ը խոստանում էին օգնություն ցուցաբերել, եթե երկրում վերականգնվի կարգուկանոն, Մոսադեղը բանակին հրամայեց մաքրել փողոցները ցուցարարներից: Որքան էլ զարմանալի է, Մոսադեղը փորձեց օգտագործել զինվորականներին՝ իր նախկին թշնամիներին, կործանելու հոծ բազմությանը, որը իր միակ պաշտպանն էր: Զարմանալի չէր, որ ռազմական ուժերը օգտագործեցին այդ հարմար պահը՝ դուրս գալով ընդդեմ Մոսադեղի: Օգոստոսի 19-ին, մինչ «Թուդե» կուսակցությունը նահանջում էր Մոսադեղի հարվածներից, Զահեդին Շերմանի 35-րդ տանկային դիվիզիային հրամայեց շրջափակել վարչապետի նստավայրը[23]:

Հաջորդ առավոտյան բազմությունը Թեհրանի հյուսիսից շարժվեց դեպի քաղաքի կենտրոն՝ արտահայտելու իր աջակցությունը շահին: Պարզ է, որ այս բազմության հրահրողները Ռաշիդյան եղբայրներն էին, ովքեր իրենց կողմն էին ներգրավել ռազմական գործիչների, հոգևորական առաջնորդների, որոնք արդեն կաշառվել էին, որպեսզի իրենց հետևից տանեն վարձված բազմությանը[24]:

Հեղաշրջման երկրորդ փորձն արվեց 1953թ. օգոստոսի 19-ին: Ռուզվելտի լրտեսների մեծ մասը թափառող արտիստների անվան տակ Թեհրանի կենտրոնում երթ կազմակերպեցին: Անկարգության յուրաքանչյուր մասնակցի տրվեց դրամական պարգև:

Մոսադեղը միայն վերջին պահին որոշեց գործել և հրամայեց Թեհրան մտցնել կառավարությանը դեռ հավատարիմ զորքեր: Այդ ընթացքում Ռուզվելտը իրադարձությունների մեջ ներքաշելով ավելի ու ավելի շատ մարդկանց՝ արագացրեց հարձակումը: Իրանում ԱՄՆ-ի ռազմական գործունեության մասին պատմում է ամերիկացի գեներալ Մտյուարտը: «Մենք,- հայտարարել է նա,- Իրանի զորքին արագ մատակարարեցինք հանդերձանք, էլեկտրագեներատորներ, դեղորայք, որպեսզի նրանք հարմար պահին աջակցեն շահին: Հրացանները, որոնք զինվորների ձեռքին էին, բեռնատար մեքենաները և զրահամեքենաները, որոնցով նրանք տեղափոխվում էին, կապի միջոցները՝ այդ ամենը մենք էինք

տվել: Եթե մենք դա չանեինք, հավանական է, որ կառավարության ղեկի մոտ կանգնած լինեին ԱՄՆ-ին ոչ բարեկամաբար տրամադրված անձինք: Ռուզվելտը երկրում գործում էր կեղծ անունով: Միայն երեք իրանցի գիտեր նրա իսկական անունը և այն, թե ինչով է նա զբաղվում: Նրանցից մեկը շահն էր: Օգոստոսին Ռուզվելտը շահին «խորհուրդ» տվեց հեռացնել Մոսադեղին իշխանությունից և վարչապետ նշանակել Զահեդիին:[25] Այդ օրերին Թեհրան ժամանեց նաև բրիգադային գեներալ Ն. Շվարցկոպֆը, որի ղեկավարության ներքո մի քանի տարի առաջ ձևավորվել էին իրանական ոստիկանությունը և ժանդարմերիան: Նա իր այցը բացատրեց հին ընկերներին տեսակցելու պատճառաբանությամբ: Միաժամանակ նա գաղտնի հանդիպումներ ունեցավ շահի և Զահեդիի հետ[26]: Դրանից առաջ Շվարցկոպֆը այցելել էր Պակիստան: Նույն ժամանակ Պակիստան էր այցելել նաև Ալի Ռեզան՝ շահի եղբայրը»[27]:

ԿՀՎ-ի նախկին բարձրաստիճան պաշտոնյա Հարի Ռոզիցկին իր «ԿՀՎ-ի գաղտնի գործողությունները» գրքում վկայում է, որ. «1953 թ. օգոստոսի հեղաշրջումը ղեկավարվում էր ԿՀՎ աշխատակիցներից բաղկացած ոչ մեծ խմբի կողմից, որոնք գործում էին Թեհրանի նկուղներից, որին նախորդել էր քարոզարշավ շատ պարզ թեմայով՝ եթե Մոսադեղի հակաշահական ուժերը մնան իշխանության գլուխ, ապա Սովետական Միությունը և իրանական կոմունիստները (Թուդե կուսակցությունը) կգրավեն երկիրը...» ԱՄՆ-ի կազմակերպած հեղաշրջման իսկական պատճառները Սովետական ուղեծրից դուրս գտնվող կառավարության նկատմամբ, ցույց էին տալիս, թե որքան հեշտությամբ Վաշինգտոնը «ազգայնականությունը» շփոթում էր «կոմունիզմի» հետ: Մոսադեղի կազմակերպած Ազգային Ճակատը գլխավորապես զբաղվում էր նավթային խնդիրների լուծման հարցով, և նա նույնիսկ հրաժարվեց օրինականացնել Թուդե կուսակցությունը, ինչպես նաև համագործակցել նրանց հետ:·Մոսադեղը տարօրինակ մարդ էր, բայց ոչ կոմունիստ,-նշում է Ռոզիցկին:

Մեր կարծիքով Միացյալ Նահանգների կառավարող շրջանակները կարողանում էին տարանջատել «ազգայնականությունը» «կոմունիզմից», սակայն սա այն դեպքն էր, որ նրանք պետք է «շփոթեին» այդ երկուսը:

Հարկ է նշել, որ «Այաքս» գործողության կազմակերպման ծախսերի մասին գրականության մեջ հանդիպում ենք իրարամերժ տվյալների[28]:

Մի շարք փաստաթղթեր ապացուցում են, որ այդ ժամանակ ԿՀՎ-ն հաջողության հասնելու համար ծախսել է ոչ ավելի քան 60.000 դոլար: Ես իսկապես չեմ կարծում,- գրում է շահը,- որ այդ գումարով հնարավոր կլիներ մի քանի օրվա ընթացքում ոտքի հանել ողջ երկիրը[29]:

1961թ. հունիսի 24-ին «The Nation» լրագիրը հետաքրքիր փաստ ներկայացրեց Իրանում կազմակերպված հեղաշրջման վերաբերյալ, ըստ որի ամերիկյան վարչակազմը չզլացավ մեծ գումարներ և զենք մատակարարել՝ հեղաշրջումը իրականացնելու համար: Միայն Ա.Դալլեսի գերատեսչությունը Իրանի բանակի սպաներին ու պետական պաշտոնյաներին կաշառելու և Մոսադեղի դեմ քարոզարշավ ծավալելու համար հատկացրեց 19 մլն դոլ.: Շվարցկոպֆի համար բանկում բացվեց անսահմանափակ վարկ:

Օգոստոսի 19-ին ամերիկյան զենքով, բեռնատարներով և տանկերով զինված՝ գեներալ Զահեդիի զորամասերը մտան Թեհրան: ԿՀՎ-ի աշխատակիցների կողմից հրահանգված, շահին հավատարիմ իրանական զինվորականությունը գրավեց Թեհրանի ռադիոկայանը, գրոհեց նախարարությունների շենքերի վրա: Շուրջ 9 ժամ մարտեր ընթացան շահի և Մոսադեղի կողմնակիցների միջև: Ի վերջո հաղթեցին Զահեդիի կողմնակիցները: Ժամը 14.՝՝-ին ռադիոն հեռարձակեց Զահեդիի կառավարության հաղթանակի լուրը: Այժմ պայքարն ընթանում էր Մոսադեղի տան շուրջ: Ի վերջո վարչապետի պաշտպանները պարտվեցին: «Ես վերադարձա Թեհրան,- գրում է շահը, -որտեղ ինձ մեծ ոգևորությամբ ողջունեցին: Իրանի ժողովուրդն անկասկած ամենուրեք աջակցում էր զահին, մինչ այդ ես ավանդական տիրակալ էի, բայց այժմ ես իսկապես ընտրված էի ժողովրդի կողմից»[30]:

Մ.Մոսադեղը և իր համախոհները՝ Ռազավին, Շայեգանին, Ֆաթեմին, ինչպես նաև ութ բարձրաստիճան սպաներ, որոնք աջակցում էին վարչապետին, նախարարների հիմնական մասը՝ ներառյալ Աբուլ Խասեմ Ամինին, «Իրան», «Երրորդ Ուժեր» ու «Ազգային» կուսակցության առաջնորդները հանձնվեցին ռազմական դատարան:

Մահապատժի ենթարկվեցին միայն Ֆաթեմին և արդարադատության նախարար Լուֆթին, պատճառաբանելով, որ նրանք ամենից շատ էին ընկել կոմունիստական ազդեցության տակ: Ազգային Ճակատի մյուս ղեկավար անդամների հանդեպ ավելի ներողամիտ գտնվեցին՝ դատապարտելով առավելապես հինգ տարվա ազատազրկության: Այնուամենայնիվ, «Թուդեի» նկատմամբ վերաբերմունքը առավել ծայրահեղ էր: Հաջորդ չորս տարվա ընթացքում աստիճանաբար բացահայտվեցին «Թուդեի» թաքստոցները, անվտանգության ուժերը գլխատեցին քառասուն պաշտոնյաների, ևս տասնչորսի տանջամահ արեցին, շուրջ երկու հարյուր հոգու ցմահ դատապարտեցին և ձերբակալեցին երեք հազար շարքային անդամների[31]:

Իսկ Մոսադեղը, որը փաստորեն այս ամենի հեղինակն էր, դատապարտվեց երեք տարվա ազատազրկության, որից հետո նա ցմահ մնաց տնային կալանքում: Ընդամենը մի քանի տարի բանտում անցկացրեց

նաև Մոսադեղի մեկ այլ համախոհը՝ կրթության նախկին նախարար, իսկ հետո Իրանի ազգային նավթային ընկերության կարգադրիչ-տնօրեն Մեհդի Բազուրգանը:

«Ես գիտեի, -գրում է շահը,- որ նա (Ի.Գ. Մոսադեղը) դավաճանության համար անշուշտ դատապարտվելու է մահապատժի: Դրա համար ես կարգադրեցի դատարանին հաշվի չառնել նրա գործողությունները ընդդեմ ինձ: Երեք տարվա բանտարկությունից հետո, Մոսադեղը ազատ արձակվեց: Նա մեկնեց Ահմադ-Աբադ՝ Թեհրանից արևմուտք գտնվող իր կալվածքը, և այնտեղ էլ 1967թ. կնքեց իր մահկանացուն: Ես ի վիճակի չէի կանխել Մոսադեղի արտաքին գործերի նախարար Ֆաթեմիի գլխատումը, քանի որ նա կոմունիստ էր: Այնուամենայնիվ ես անձամբ ֆինանսապես ապահովեցի նրա ընտանիքի գոյատևումը: Այս աջակցությունը դադարեց, երբ տիկին Ֆաթեմին, որը բնակվում էր Լոնդոնում, վերադարձավ Իրան՝ աջակցելու Խոմեյնիին»[32]:

Հեշտությամբ իրագործված այս հեղաշրջումը կարելի է մեկնաբանել երկու փաստարկներով՝ Ազգային Ճակատում ավանդական և միջին խավի միջև տեսակետների տարաձայնությունների խորացմամբ և քաղաքային վարչակազմից զինվորական կորպուսի օտարացումամբ[33]:

Միայն 1976թ. ԱՄՆ-ի հետախուզական մարմինների գործերի հետաքննությամբ զբաղվող՝ Սենատի հատուկ հանձնաժողովը պաշտոնապես հաստատեց, որ միջամտել են Իրանի ներքին գործերին. «1953-1954թթ. ԿՀՎ-ն իրականացրել է երկու առավել հանդուգն գործողություններ. առաջինը Իրանում՝ Մոհամմեդ Մոսադեղի կառավարության դեմ, և երկրորդը Գվատեմալայի նախագահ Ջակոբո Արբես Գուսմանի դեմ: Երկու գործողություններն էլ անցկացվել են արագ և փաստորեն առանց արյունահեղությունների, դրանց իրականացումը թույլ տվեց իշխանությունից հեռացնել կոմունիստամետ համարվող երկու առաջնորդների և նրանց փոխարինել արևմտամետ կողմնորոշում ունեցող գործիչներով»[34]:

ԱՄՆ-ի և Անգլիայի ղեկավար մարմինները կարծում էին, որ այս հեղաշրջումը պետք է դաս հանդիսանա Մերձավոր և Միջին Արևելքի մյուս բոլոր երկրների համար: Այդ կապակցությամբ «Նյու Յորք Թայմսը» գրել է,- «Չնայած Իրանի նավթի շուրջ ծագած խնդրի լուծումը թանկ նստեց բոլոր մասնակիցների վրա, սակայն այն փայլուն օրինակ կհանդիսանա հարուստ ռեսուրսներ ունեցող, թույլ զարգացած երկրների համար: Նրանք համոզվեցին, թե որքան թանկ վճարեց Իրանն իր մոլեռանդ ազգայնամոլության համար»[35]:

«Այաքս» գործողության շնորհիվ Սիացյալ Նահանգներն երեք ձեռքբերում ունեցան. «1950-ական թվականներին մեծացավ Իրանի կախվածությունը ԱՄՆ-ից և ավելին՝ այն մերձեցավ արևմուտքի հետ, Իրանը

ակնհայտորեն բացառում էր կոմունիզմը, և ավանդական անգլո-ռուսական մրցակցությունը փոխարինվեց ամերիկա-սովետական մրցակցությամբ»[36]:

Քերմիտ Ռուզվելտի կատարած «փայլուն» աշխատանքը ըստ արժանավույն գնահատվեց Միացյալ Նահանգների կառավարության կողմից: Հետախուզությունից հեռանալով՝ նա ծառայության անցավ «Գաղֆ Օյլ Քորփոռեյշնում», որտեղ 1960թ. արդեն զբաղեցնում էր փոխ-նախագահի պաշտոնը: Բարձր գնահատելով հեղաշրջման ժամանակ նրա վաստակը՝ արևմտյան մամուլը Ռուզվելտին տվեց «պարոն Իրան» մականունը[37]: Իրանի շահը նույնպես բարձր գնահատեց Քերմիտ Ռուզվելտի աշխատանքը, ասելով, որ. «Իմ գահի համար պարտական եմ Աստծուն, իմ ժողովրդին, իմ զորքին և Ձեզ»[38]:

1953թ. կրկին տիրանալով գահին՝ շահը բոլոր միջոցներով ամրապնդեց իր իշխանությունը: Միապետության հաստատման և Իրանի ժողովրդի նկատմամբ զանգվածային հաշվեհարդարի հիմնական զենքը դարձավ 1957թ. Իսրայելի հետախուզության ծառայության, ԿՀՎ-ի և Ֆեդերալ հետախուզական բյուրոյի, ինչպես նաև Ֆրանսիայի ու Անգլիայի աջակցությամբ ստեղծված նոր գաղտնի ոստիկանությունը, որը կոչվեց Ազգային անվտանգության և տեղեկատվության կազմակերպություն: Շուտով բոլորին քաջ հայտնի դարձավ ՍԱՎԱԿ հապավումը (Սազման-ե Էթթիլա'աթ վա Ամնիյաթ-ե Քիշվար)[39]: Հազարավոր մարդկանց, ում կասկածում էին հակաշահական ընդդիմության մեջ, ՍԱՎԱԿ-ը բանտ էր նետում և չլսված տանջանքների ենթարկում: Հատկապես դաժան հալածանքի ենթարկվեցին «Թուդեի» անդամները, որոնք ստիպված ընդհատակ անցան: 360 հազար քաղբանտարկյալներ գլխատվեցին կամ խոշտանգումներից մահացան ՍԱՎԱԿ-ի բանտախցերում:

Կարելի է վստահ ասել, որ Մ.Մոսադեղի կառավարության տապալումը ուժեղացրեց Իրանի տնտեսական, քաղաքական և ռազմական կախվածությունը Միացյալ Նահանգներից: Դրան հասնելու համար ԱՄՆ-ը առաջին հերթին հոգաց ամրապնդելու շահի դիրքերը և բարձրացնելու նրա հեղինակությունը, որի համար իրագործվեցին մի շարք ծրագրեր: Օրինակ՝ 1955-1956թթ. միջոցառումներ ձեռնարկվեցին Մեջլիսը «երիտասարդացնելու» ուղղությամբ. պահպանողական կալվածատեր-դեպուտատներին փոխարինելու եկան նրանց որդիները: 1957թ. շահը ձեռք բերեց «վետոյի» իրավունք, որի համաձայն կարող էր պառլամենտական օրինագիծը հետ ուղարկել վերանայման: 1957թ. սաեծվեց «Փահլավի ֆոնդ» բարեգործական կազմակերպությունը, իսկ 1958թ. սեպտեմբերից շահը մի քանի անգամ մասնակցեց մամուլի ասուլիսների[40]:

Ամփոփելով վերը շարադրվածը հանգում ենք այն եզրակացության, որ ԱՄՆ-ն իրենց երկրի անվտանգության պահպանման քողի տակ կա-

ղող են միջամտել օտար երկրների ներքին գործերին, իրականացնել հեղաշրջումներ, իշխանության բերել ԱՄՆ-ի քաղաքականությանը գաղափարակից մարդկանց:

ISKANDARYAN GOHAR

## ON THE OPERATION "AJAX" AUGUST, 1953, IN IRAN

*(Summary)*

The 1951-1953 years period was a turning point in US-Iran relations. After the nationalization of the Iranian oil industry crisis raised. Both USA and Great Britain decided that the crisis could be settled only through a coup d'ntat. By June 1953, the CIA devised operation "Ajax" in consultation with the SIS. The CIA chose its top agent in the Middle East Kermit Rooselvelt to run the operation. As a result of that operation the government of Dr. Mohammad Mosadegh lost its power and fell down. Only in 1976 the United States Senate assumed that the USA had interfered in internal affairs of other countries.

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Samih K. Farsoun and Mchrdad Mashayekhi, Iran Political Culture in the Islamic Republic, London and N.Y, 1992, p.237.
2. «An Interim Report of the Select Commitee to Study Governmental Operations with Respect to Intelligwnce Activites. United States Senate» Washington, 1975, p.9. Տե՛ս նաև Новая и Новейшая история, N 4, Москва,1979, стр.111.
3. Kermit Roosevelt, Countercoup The Struggle for The Control of Iran, New York, 1979, p.3.
4. The Iranian Journal of International Affairs, Tehran, 2001, No.1, p. 111.
5. М.Нишанов"Антиимпериалистическое движение в Иране (1951-1953)", Ташкент, 1973, стр. 115. Материалы по Востоку.Ташкент, 1966, стр 39.
6. Mohammad Reza Pahlavi The Shah of Iran, Answer To History, New York, 1980, p. 88.
7. Kermit Roosevelt, Countercoup..., p.119.
8. Новая и Новейшая история, N 4, Москва,1979, стр. 121.
9. George Lenczowski, "American Presidents and the Middle Eeast", London, 1990, p 37.
10. Kermit Roosevelt, Countercoup..., p.121-122.
11. Новое Время, N 2, 1980, стр.29.
12. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions,1983, Princeton, New Jersey, p. 279.
13. ذوقی ،رفتار سیاسی امریکا در قبال نهضت ملی شدن صنعت نفت ایران ۱۳۳۲-۱۳۳۰ ۱۹۵۳-۱۹۵۰ تهران -۱۳۸۰،ص.۱۷۷ . دکتر ایرج
14. والن نانز،تاریخ مستند روابط دو جانبهٔ ایران و ایالات متحده آمریکا،تهران ،۱۳۷۸ ،ص.۳۷۸ یوناه ۱۱۷... ا...

15. Новая и Новейшая история, N 4, Москва,1979, стр.122-123.
16. عبدالرضا هوشنگ مهدوی،سیاست خارجی ایران در دوران پهلوی۱۳۵۷-۱۳۰۰،تهران،۱۳۵۸،ص ۲۱۴
17. Answer To History, p. 89.
18. Նույն տեղում, էջ 89:
19. Նույն տեղում, էջ 90:
20. Նույն տեղում, էջ 91:
21. Ն.Կ.Մ.Սամմադ Ռեզա Շահ Փահլաւի, Առաքելութիւն Հայրենիքիս Համար,Թեհրան,1973,էջ 217: George Lenczowski, Iran Under The Pahlavis, Stanford, 1978, p. 374.
22. Answer To History, p. 90.
23. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions,p. 280.
24. Richard W.Cottam, Iran and the United States A Cold War Case Study, Pittsburgh,1988,p. 107-108.
25. اینگه بیهان،پهلوی استوری ،تهران ،۱۳۷۹،ص.۱۱۶.
26. Michacl Kahl Sheenan, Iran The Impact of United States Interests and Policies 1941-1954, N.Y, 1968, p. 61.
27. Новое Время, N 2, 1980, стр. 29.
28. George Lenczowski, American Presidents and the Middle East, London, 1990, p. 38. Иран. Очерки новейшей истории, стр 244.
29. Answer To History, p 91.
30. Answer To History, p. 90-91.
31. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, p. 280.
32. Answer To History, p. 91.
33. Ervand Abrahamian, Iran Between Two Revolutions, p. 274-275.
34. «Final Report of the Select Committee to Study Governmental Operations with Respect to Intelligence Activities. United States Senate», Washington, 1976, p. 45.
35. The New York Times, 6 August,1954.
36. Amin Saikal, The Rise and Fall of The Shah, New Jersey, 1980, p. 45.
37. Новая и Новейшая история, N 4, Москва,1979, стр.127.
38. Gary Sick, All Fall Down America's Tragic Encounter with Iran, N.Y., 1985, p. 7.
39. John L.Esposito, The Islamic Threat Myth or Reality ?, N.Y., 1995, p. 104. Ervand Abrahamian, Iran Between to Revolution, p. 419.
40. С.Л.Агаев, Иран в прошлом и настоящем, М., 1981, стр.143-147.